



# ԼՈՒՐԵՐ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ԹԵՄԷՆ

## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ

Ծափաթ 14 եւ Կիր. 15 Յուլիս շաբաթավերջը հոգեկամ վերամորգման առիթ էր Սիտմիի հայութեան համար:

Աւստրալիոյ եւ Նոր Զելանդայի Առաջնորդ, Գերշ. Տ. Աղան եպս. Պալիօզեան, Սիտմիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ քահանայ ձեռնադրեց Յակոբ Սրկ. Գարագաշեանը:

Յակոբ Սրկ. կոչման արարողութիւնը տեղի ունեցաւ Ծր. 14 Յուլիսին, երեկոյեան կիրակւոտի ժամերգութեան ետք: Խարտաւիլակի պաշտօնը կատարեց Նորայր Քհն. Բաթա-մեան, աղըթերակայութեամբ Գեորգ Սրկ. Ճամոյեանի եւ Յարութիւն Սրկ. Համբմեանի:

Կոչման արարողութեան աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը մերկայ հաւատացելոց բացատրական մը տուաւ քահանայական կոչման, ձեռնադրութեան եւ օծման մասին:

Կիր. 15 Յուլիսին, Սիտմիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ Եպիսկոպոսական համ-դիսաւոր պատարագ մատոյց Առաջնորդ Աղան Սրբազան Հայրը: Ս. Պատարագի երգեցողու-թիւնը կատարեց եկեղեցւոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Դպրաց Դաս Երգչախումբը ղեկավա-րութեամբ Դպրապետ Վարդան Էլմասեանի:

« Զի ողորմած . . . » աղօթքն ետք, ըմբայցուն ծմբադիր խորան բարձրանալով, Զեռնադրիչ Սրբազան Հօր օրհնութիւնը ստացաւ, եւ սարկաւագական ուրարը փորուրարի վերածուեցաւ ի մշան Քրիստոսի քաղցր լուծին:

« Ողջոյն » էն առաջ կրկին աղօթքներու ըմբացքին յաջորդաբար փիլոն, սաղաւարտ, շուրջառ, գօտի եւ քահանայական լրիւ զգեստը շնորհուեցաւ ըմբայցունին:

« Առաքելոյ աղաւմոյ » շարականի երգեցողութեան աւարտին, Զեռնադրիչ Սրբազան Հայրը Սրբալոյս Միւռնոնով օծեց ըմծայեալի ճակատը եւ երկու ձեռքերու ափերը, Յակոբ Սրկ. վերամուսմելով Պարթեւ Քահանայ, Պարթեւ Հայրապետներու յիշատակին:

Օծումէն ետք Ս. Հայրը մորըմծային յամձնեց Ս. Սկիհը, ամոր տալով պատարագելու իշխանութիւն, ապա մորած Պարթեւ Քահանայ հայրը իր առաջին « Խաղաղութիւն »ը բաշ-խեց հաւատացեալ ժողովուրդին:

Առաջնորդ Սրբազան Հայրը խօսեցաւ հոգեշունջ քարոզ մը, մորած Պարթեւ Քահա-նային վերիշեցմելով հաւատքի ու մուիքումի ոգին, թելադրելով որ իր ծառայութիւնը մատուցանէ հայ հաւատացեալ ժողովուրդին, ըմթանալով Քրիստոսի ճանապարհէն ու Պար-թեւ Հայրապետներու ուղիէն:

« Ողջոյն » ի պահուն եկեղեցական դասը Զեռնադրիչ Ս. Հօր առաջնորդութեամբ ողջոյնը ստացաւ մորըմծայ Պարթեւ Քահանայի ճակատէն ու ձեռքերէն: Նոյնը տեղի ունեցաւ պատարագի աւարտին՝ աջհամբարով, խուռներամ ժողովուրդին կողմէ:

Յաւարտ Ս. Պատարագի մորըմծայ Պարթեւ քահանան Առաջնորդարանէն մերս ըմղունեց եկեղեցւոյ պաշտօնական մարմիններու եւ պաշտօնական անձնաւորութիւններու շնորհաւո-րամբները: Եկեղեցւոյ Ատեմապետ, Տիար Կարօ Սէթեան յանուն վարչութեան շնորհաւորա-կան խոսքով հանդէս եկաւ:

Զեռնադրութեան արարողութեան մերկայ եղան Արամայիս Ա. Քհն. Միրզոյեանը, Հայ Աւետարանական եկեղեցւոյ Հովիւ Վեր. Յովհաննէս Գարեւեանը, Աւստրալիոյ եկեղեցիներու Խորհուրդի մերկայացուցիչներ եւ այլ անձինք:

Պարթեւ Քահանայի կմքահայրութեան պաշտօնը սիրայօծար կերպով յանձն առաւ Սիտ-միի եկեղեցւոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Դպրաց Դաս Երգչախումբի վարչութեան Ատեմապետ, Յարութիւն Քէօթուրանեանը, եկեղեցասէր եւ հայրենասէր հայորդի մը:

Պարթեւ Քհնյ. Գարագաշեան ծնած է Պուլիս 1942ին: Նախակրթարանի ուսումը ստացած է Պուլսոյ Եսայեան վարժարանի մէջ, որմէ ետք մետուած է կեանքի ասպարէզ. Այդ տարի-ներու ըմբացքին միշտ դիմած է իմքնագարգացման, կապ պահելով Հայ գրի ու լեզուի հետ: Փոքր տարիքէն ծառայած է Պէյօղլուի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, ուր եւ ստացած է դպրութեան եւ սարկաւագութեան աստիճանները:

1985-ին գաղթած է Աւստրալիա եւ բնակութիւն հաստատած Սիտմիի մէջ. ժամանման առաջին օրէն սիրով ու մուիքումով ծառայած է Սիտմիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ:

Պարթեւ Քահանայ ամուսնացած է 1969ին ու հայր է երկու աղջիկ զաւակներու:

Պարթև Բահամային կը մաղթեմք որ ըլլայ « Մշակ առանց ամօթոյ »:

## ՀՐԱԺԵՇՏԻ ՊԱՏԱՐԱԳ

Սիտմիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ երկարամեայ հովիւ Արամայիս Ա. Քհմյ. Միրզա-յեան, յառաջացեալ տարիքի ու վատառողջութեան պատճառով, խնդրամբ մերկայացուցած էր Թեմիս Առաջնորդ Սրբազան Հօր, համզստեան կոչուելու համար:

Առաջնորդ Սրբազան Հայրը, Թեմական խորհուրդի եւ Սիտմիի եկեղեցւոյ վարչու-թեան հետ խորհրդակցելէ ետք, վաւերացուց Տ. Հօր խնդրամբը, զիմք համզստեան կոչե-լով:

Արամայիս Ա. քահանայ Միրզայեանը իր հրաժեշտի պատարագը մատոյց կիր. 8 Յուլիս 1990-ին Սիտմիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ:

Հայր Մեր-ի պահում Առաջնորդ Ս. Հայրը իր քարոզիմ մէջ ամդրադարձաւ ու վեր առաւ Տ. Հօր բազում տարիներու - 32 - ծառայութիւնը ու բարեմաղթեց առողջ ու երջա-միկ համզստեան տարիներ: Տ. Հայրը իր պատասխան խօսքիմ մէջ շնորհակալութիւն յայտ-նեց Առաջնորդ Ս.Հօր, քահանայից եւ սարկաւագայ դասում, եկեղեցւոյ պաշտօնական մար-միմներում եւ ժողովուրդիմ, իր մկատմամբ ցուցաբերած վերաբերմունքիմ համար:

Յաւարտ Ս. Պատարագի պատշան հիւրասիրութիւն մը տեղի ունեցաւ Առաջնորդարանի Ընդունելութեան սրահիմ մէջ, ուր եկեղեցւոյ Ատենապետ Տիար Կարօ Սէթեան գեղեցիկ եւ միեւնոյմ ժամանակ յուզիչ խօսքով համդէտ եկաւ, վեր առնելով Տէր Հօր 32 տարիներու նուիրեալ ծառայութիւնը Աւստրալիոյ Հայ գաղութիմ: Ապա Տէր Հայրը եւ Սրբազան Հայրը իրենց խօսքը ըրիմ ու Սրբազան Հայրը եկեղեցւոյ պաշտօնական մարմիմներու անունով Տէր Հօր յանձնեց գեղեցիկ ժամացոյց նուէր մը, զմահատելու համար Տէր Հօր ճշդա-պահութիւնն ու ժամադրապահութիւնը:

Պաշտօնական այս բաժնէն ետք Տէր Հայրը կարկամդակը կտրեց ու տեղի ունեցաւ պատ-շան հիւրասիրութիւն:

## ԼՈՒՐԵՐ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԷՆ

Աւստրալիոյ եւ Ն.Զ.-ի Առաջնորդ, Գերշ. Տ. Աղան Եպս. Պալիօգեան, Յունիս 7-15 Թեմական այցելութիւն տուաւ Փրքթի - Արեւմտեան Աւստրալիա - փոքրաթիւ հայութեան:

Սրբազան Հայրը Կիր. 10 Յունիսիմ պատարագեց եւ քարոզեց Ամկլիքան Ս. Հիլտա եկեղեցւոյ մէջ ու հաղորդեց 150ի հասնող հաւատացեալ Հայերը:

Նոյմ օրը սիրոյ սեղանի շուրջ բոլորուեցան մերկաները ու հանելի գրոյց ունե-ցան Ս. Հօր եւ իրար հետ:

Առաջնորդ Սրբազան Հայրը մնացեալ օրերում առիթը ունեցաւ համդիպելու գաղութի ամդամներում եւ ամոնց ըմտամիքմներում հետ ու կարելիութեան եղած չափով հասաւ ամոնց հոգեւոր կարիքմներում:

Դշ. 13 Յունիսիմ Առաջնորդ Սրբազան Հայրը համդիպում ունեցաւ Փրքթի Ամկլիքան եկեղեցւոյ Առաջնորդ Փիթըր Արքեպս. Գարմլիի հետ, որում շնորհակալութիւն յայտնեց իր ու եկեղեցւոյ օգնութեան համար, Հայաստանի երկրաշարժի առիթով:

Աղամ Սրբազամ իր շնորհակալութիւնը եւ երախտագիտութիւնը յայտնելու համար, փոքր Արքեպս.իմ մուիրեց հայկական փոքրիկ խաչքար մը, Հայ ժողովուրդի եւ եկեղեցւոյ վերաբերմունքը ցուցաբերելով:

Աւստրալիոյ եկեղեցիներու հորհուրդի 35-րդ ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Յունիս 29-3 Յուլիս 1990 Աւստրալիոյ Ատրլէյտ քաղաքիմ մէջ:

Ժողովի բացումը տեղի ունեցաւ Ուրբաթ երեկոյեան, եկեղեցական արարողութեամբ, որում մաս կազմեցին հոգեւոր առաջնորդներ, մերկայացուցիչներ ու մասնակիցներ թիով 120 հոգի: Եկեղեցական արարողութեան ընթացքիմ օրուայ քարոզիչն էր, եկեղեցիներու Համաշխարհային հորհուրդի մայիկիմ ընդհանուր քարտուղար Տոքթ. Ֆիլիպ Փոթըր:

Ժողովը իր աշխատանքներում սկսաւ շաբաթ օրը որ տեւեց միմէն երեքշաբթի երեկոյեան: Թեմիս Առաջնորդ, Գերշ. Տ. Աղամ Եպս. Պալիօզեան, իր գործօմ մասնակցութիւնը բերաւ ժողովներում. ժողովի օրերում ամ ըմտրուեցաւ Գործադիր Յամմախումբի ամդամ, որը վեց հոգիներէ բաղկացած էր:

Շաբաթ օրուայ ժողովիմ, Աղամ Սրբազամ ելոյթ ունեցաւ, եւ Աւստրալիոյ եկեղեցիներում ու ժողովրդիմ յայտնեց Հայ եկեղեցւոյ ու ժողովուրդի երախտագիտական զգացումները եւ շնորհակալութիւնը, 1988 Դեկտեմբերի Հայաստանի երկրաշարժի առիթով Աւստրալիոյ եկեղեցիներու եւ ժողովուրդի ցուցաբերած բարոյական եւ միւթական օգնութեան համար:

Իսկ Գշ. 3 Յուլիսիմ ժողովականներում մերկայացուց Աւստրալիոյ մէջ գտնուող Ռումէն եկեղեցւոյ պաշտպանութեան ի խնդիր առաջարկութիւն մը, որը միաձայնութեամբ ընդունուեցաւ:

Աւստրալիոյ եկեղեցիներու հորհուրդի ղեկավար մարմինը կը մկատուի Աւստրալիոյ Բրիստոնէական գործունէութեան յամմախումբը - World Christian Action -: Աղամ Սրբազամ յառաջիկայ չորս տարուայ համար վերոյիշեալ յամմախումբի ամդամ ըմտրուեցաւ:

Առաջնորդ Սրբազամ Հայրը Ատրլէյտ գտնուած օրերում, մաեւ առիթը ունեցաւ մօտէմ կապ հաստատելու եւ համդիպելու տեղւոյմ փոքրաթիւ հայութեան հետ:

Կիրակի, 1 Յուլիսիմ 50-ի հասնող հայորդիներու մերկայութեամբ Ս. Պատարագ մատոյց եւ քարոզեց ու ապա հաղորդեց բոլոր մերկամերը:

Յաւարտ Ս. Պատարագի մերկամեր բոլորուեցամ սիրոյ սեղանի շուրջ, ստեղծելով հայկական ջերմիկ մթնոլորտ մը: Հոս ցուցադրուեցաւ Friend to Friend երկրաշարժի վերաբերեալ տեսաներիզը, ու մերկամեր սրտաբուխ մուիրատուութիւն կատարեցին:

Դիւամ Առաջնորդարամի  
Աւստրալիոյ եւ Ն.Զ.-ի



Աստրալիոյ եւ Նոր Զելանդիայի քնմի Առաջնորդ Աղամ Եպս.  
Պալիօզեան կը ձեռնադրէ Տ. Պարթեւ Քիմյ. Գարագաշեանը՝ կնքահայրութեամբ  
Յարութիւն Քեօթողլամեանի Ծբ. 14 Յուլիս 1990